ՍԻՈՆ

ԻԲ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1948 — ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻՍ — ԹԻՒ 5-6

ԿՆԻՔ
ԿԻԼԻԿԻԿՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՊԱՐԵԳԻՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՄԲ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ, ՇՆՈՐՀՔ, ՍԷՐ, ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ Ի ՏԵՌԱՆՆԷ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՂՋՈՅՆ Ի ՄԷՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ԱՌԱՔՆՈՐԴ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

Սիրելի՛ք ի տէր,

Առօրեայ կեանքին, ուրախութիւններին և յաջողութիւններին ընթացքից են, երբեմն, և ծանր փորձութիւններ և նեղութիւններ։ այդպիսի ժամանակ է, որ երեւան է գալիս ազգի և հասարակութեան բարձր առաքինութիւնները եղբայրական սիրոյ և զոհողութեան։ Պաղեստինի մէջ յառաջ եկած կացութեամբ, մեր գաղութն այնտեղ ենթարկուած է նիւթական և բարոյական ծանր վնասների և զրկանքների. առաքելական խօսքն է։ «Եթէ վշտանայ ինչ մի անդամն, վշտանան ամենայն անդամքն ընդ նմա». երբ մեր ժողովրդի և հաւատացեալների մի հատուած ենթարկուած է փորձութեան և նեղութեան, չենք կարող անտարբեր մնալ և մենք, որ միեւնոյն եկեղեցու և ազգի ամբողջութեան մասն ենք։

Երուսաղէմի Հայոց մեր սրբազան եղբայրը Տէր Կիւրեղ Պատրիարք իւր 20 Մարտ 1948 թուի գրութեամբ նկարագրում է այն ծանր վիճակը, որին ենթարկուած է Երուսաղէմի և միւս կեդրոնական քաղաքների հայութիւնը։ Ինչպէս պատմական հին շրջաններում եկեղեցիների և վանքերի հովանու տակ պատսպարուել են նեղութեան օրերին մեր ժողովուրդի մասերը, այսպէս էլ այսօր, բնականաբար, տեղական հայութիւնը հաւաքուել է Երուսաղէմի հինաւուրց Աթոռի շուրջը։, ժամանակաւոր պաշտպանութիւն գտնելու համար։ Առայժմ Վանքի պարիսպների մէջ հաւաքուած են 1800 հոգի, եօթ հարիւր հոգի էլ դուրսը։ Վանքի մէջ եղած բոլոր շէնքերը լցուած են, ժողովրդի մի մասը

պատսպարուած է անցքերի կամարների և պատերի տակ, որոնց համար ստիպուած են ազատ տեղերում փայտէ խրճիթներ շինել, բացօթեայներին ներս առնելու համար։ Սպասւում են դարձեալ հարիւրաւոր ընտանիքներ, որոնք հեռանալ կարող չեն և դէպի Վանքը պիտի դիմեն։

Ամենադժուար խնդիրներից մէկն էլ այդ մեծ բազմութեան սննդեան խնդիրն է, որ բարձր սղութեան է հասել և դժուար է ձեռք բերել։ Հասկանալի է, թէ ի՞նչ կացութիւն է ստեղծուել այն ընտանիքների համար, որոնք ապրում էին իրենց առօրեայ աշխատանքներով կամ արհեստներով, իսկ այժմ անգործ են հանգամանքների բերմամբ։ Փոքր ի շատէ ունեւորներն էլ հեռացել են դրացի երկիրները, Կիպրոս, Լիբանան և Սուրիա։

Ո՞վ պէտք է այնտեղ մնացած բազմութեան օգնութեան հասնէ։ Երուսաղէմի Աթոռը, ի հարկէ, կատարել է և պիտի կատարէ իւր հնարաւորը, բայց, տարաբաղդաբար ինքն էլ ազատ չէ մնացել նիւթական մեծ վնասներից։ Նորա հասութաբեր երկու մեծ կալուածները հրկիզման են ենթարկուել կամ վնասուել, որի հետեւանքով Վանքն էլ նիւթականի նեղութեան մէջ է։ Գեթսեմանիի Աստուածածնի վանքը լցուել է յորդ անձրեւներից յառաջացած հեղեղի ջրով և տիղմով, ոչ միայն հինաւուրց սրբազան յիշատակներ և մնացորդներ ոչնչացնելով, այլ և նիւթական մեծ վնասներ պատճառելով։ Վանքը պիտի նորոգուի և Աթոռը հազարաւոր ոսկիների ծախսելիք ունի, թէ՛ ցունաց հետ եղած բաժինների և թէ մեր ուրոյն մասերի նորոգման և կարգաւորման համար։ Մեր սրբազան եղբօր նամակը պատուիրեցինք թերթերի միջոցով մատչելի դարձնել հասարակութեան, մանրամասնութիւններ այնտեղից կ'իմանաք։

Կը տեղեկանաք նոյնպէս, որ Ս. Պատրիարքի նախագահութեամբ կազմուած է հոգեւորականներից և աշխարհականներից Խնամակալութիւն, որ տեղացիներից և մանաւանդ դրսից ստացած օգնութեամբ պիտի աշխատի մեղմել խեղճութիւնը և ազատել թանկագին կեանքեր։

Այստեղ եւս, Սրբազան Պատրիարքի նամակն ստանալուց յետոյ, կեդրոնական Վարչութեան և հասարակութեան առաջաւոր ներկայացուցիչներից մի ցանձնաժողով կազմեցինք, որի գործը պիտի լինի անմիջական եղբայրական օգնութեան հանգանակութիւն սկսել. առաջարկում ենք Մեզ ենթակայ, Դամասկոսի, Հալէպի և Կիպրոսի թեմերին եւս, իրենց առաջնորդների նախագահութեամբ նման եղբայրական օգնութեան յանձնաժողովներ կազմել և գործի անցնիլ, արդիւնքը յայտնել դրաւոր Մեզ, անմիջական յարաբերութիւն սկսելով նաեւ Կեդրոնական ցանձնաժողովի հետ Պէյրութի Առաջնորդարանի միջոցով։ Ցանձնաժողովների անունները պիտի լինին ՊԱՂԵՍՏԻՆԻ ՀԱՅԵՐԻՆ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ։

Օրհնում ենք յանուն Աստուծոյ այս բարի և եղբայրական օգնութեան գործի մէջ բոլոր աշխատաւորներին և նուիրատուներին։

Շնորհ Տեառն եղիցի ընդ ձեզ։

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

Տուաւ կոնդակս յամի մարդեղութեան Տեառն
1948 Ապրիլի 24 ին ի թուականութեանն
Հայոց ՌՅՂԷ, յԱնթիլիաս։
Թիւ 35